

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

29.08. 2016թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ

Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ

Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Հ.Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ. Անտոնյանը, Դ.Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա.

Օհանյանը, Լ.Բերդյանը, Ս.Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Ա. Սահակյանը, Ա.

Բաղդասարյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ

Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա) «Դիակոնիա» կազմակերպության կողմից Լոռու մարզի երեխաների ամառային հանգստի կազմակերպման մասին.

բ) Նոր ուսումնական տարում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Ն. Սարգսյան

2. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին.

Զեկ. Հ. Պապոյան

3. Հաշվետվություն Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2015-2016թթ. ուսումնական տարվա աշխատանքային գործունեության մասին.

Զեկ. Մ. Սայադյան

4. Ներքին աուդիտի բաժնի կողմից առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն.

Զեկ. Լ.Բերդյան

5. Այլ հարցեր

#### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բաղդոյանին, Հ. Թաղևոսյանին , մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին`

Անհատական աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների հետ սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու նպատակով:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Սարգսյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել, որպեսզի սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաները ապահովվեն անհրաժեշտ գրենական պիտույքներով և այլ պարագաներով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Պատշաճ մասնակցություն ապահովել սեպտեմբերի 1-ի և «Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառումներին:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների կողմից աշնանացանի կազմակերպման և իրականացման ուղղությամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/